

ՏԱՍՆ ԵՒ ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, և տարվաընթաց 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редація «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
բացի էրեւակի և աստիճանից:

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԱՌԱՋԻԿԱՅ 1890 ԹԻԱԿԱՆԻՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպրիետարի մէջը ստանում ենք սկիսկան ՀԵՌԱՊԵՏԱԲԵՐԻ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսականը 6 ռուբլի:
Գրքի «ՄՇԱԿ» կարելի է խմբագրութեանը (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւնում, Թամաշիւկի տանը):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редація газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԻՊԱԿՈՒԹԻՒՆ

«Մշակի» գոյութեան կարճատև պատմութիւնը.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նախընտրելով Մոսկովայից, Նախակ Աղապաշի, Ներքին լուրեր.—ԱՐՏԱՌԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գաղութոյն. Նախակ Թիֆլիսայից, Արտաքին լուրեր.—ԽՈՒՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՊԵՏԱԲԵՐԻ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԱճԻՐՈՒՄԵՐ:

«ՄՇԱԿ» ԳՈՅՈՒԹԵԱՆ ԿԱՐՃԱՏՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Այժմ կը վերջանում է մեր գործունէութեան տասն և եօթերորդ տարին և մենք մտնում ենք «Մշակի» գոյութեան տասն և ութերորդ տարեշրջանը, աւելորդ չենք համարում յիշել մեր ընթերցողներին «Մշակի» ծագման և նրա գործունէութեան կարճատև պատմութիւնը:
Դեռ «Մշակը» չէր հրատարակված, մենք ունեինք արդէն շաբաթը մի անգամ լրմբազարկան ժողովներ մեր խմբագրատան մէջ: Նպատակ ունենալով մեր որոշած պրոպրիետարի հայերէն լրագիր հրատարակել, մեզ այնու ամենայնիւ կատարելապէս անյայտ էր հայոց հասարակութեան որ դասակարգը կը տայ մեզ ընթերցողների կոնտինգէնտ, քանի որ «Մշակից» առաջ

չէր կար հայ ընթերցողներին որոշ շրջան, մեզ կատարելապէս անյայտ էր, նմանապէս, ո՞վքեր կը լինեն «Մշակի» աշխատակիցներ, քանի որ հայերի մէջ 1871 թվին չէր կար պոլիգրաֆիա-գրողներ մի որ և է որոշ շրջան:

Բնականապէս մեր մտադրված գործունէութեան մէջ մեզ աջակցելու համար մենք դիմեցինք նախ և առաջ այն ժամանակ եղած ինտելիգենցիային, համալսարանական երիտասարդութեան, որը թէև երբէք չէր գրում, բայց մեր կարծիքով իր մտաւոր զարգացման շնորհով աւելի ընդունակ պէտք է լինէր ըմբռնելու լրագրութեան կոչումը և նրա նշանակութիւնը: Եւ ահա խմբագրական սենեակներում առաջին ժողովին հաւաքվեցան միմյանի համալսարանականները: Բայց առաջին ժողովից արդէն մեր բարձրագույն ուսումնասիրողները անընդունակ հանդիսացան ըմբռնելու քաղաքական թերթին նշանակութիւնը: Եւ մենք նրանցից առաջարկում էր մեզ մի մի բանասիրական, իրանց մասնագիտութեան մասին մէկը պէտք է գրէր իրաւաբանութեան մասին, միւսը մանկավարժութեան մասին, երրորդը բնագիտութեան մասին, չորրորդը բժշկութեան մասին, հինգերորդը լեզուագիտութեան մասին, և այլն... Վերջապէս լրագրի փոխանակ «Մշակը» նրանց ձեռքում կը դառնար թէօ-

րիական յօդուածների մի ժողովրդացրած ժողովածու, բայց ոչ թէ մի լրագիր: Դրանով չէր բաւականաւոր, նրանք ուղղակի սկսեցին պահանջել, որ մենք հրատարակենք մի ամսագիր և ոչ թէ մի լրագիր: Ուրիշ բան է ժողովրդի կենքն ուսումնասիրելը, ժողովրդի առօրեայ պահանջներն արտայայտելը գաղափար,—և բոլորովին ուրիշ բան է թէօրիական ուսումնական յօդուածներից բաղկացած մի ժողովածու հրատարակելը: Թէև լրագրումն էլ մի մի անգամ կարելի է բանասիրական բաժնում թեթև կերպով ծանօթացնել ընթերցողներին ուսումնական թէօրիական հետ,—բայց այդ տեսակ յօդուածներ չեն կարող քաղաքական թերթի էական մասը կազմել:

Բարձր ուսումնասիրողները, շփուելով նոր, ժամանակակից, անհրաժեշտ, ժողովրդի առօրեայ պահանջների հետ անձնուհաս հանդիսացան տանել այն գործը, որը աչքի առաջ պիտի ունենար քաղաքական թերթը կատարելու,—և նրանք, այդ թէօրիականները, իրանք փոքր առօրեայ հեռացան խմբագրութիւնից, որը նպատակն էր ժողովրդի ժամանակակից կենքն ուսումնասիրելու և իր կարողութեան չափ որոշ պատասխաններ տալու ժողովրդի առօրեայ կենսական պահանջներին...

Ապա խմբագրական ժողովները միանգամայն կերպարանափոխեցան, չամալսարանականների հեռանալուց յետոյ մենք փորձեցինք շրջապատել մեզ մեր հասարակութեան մէջ մեզանից առաջ եղած գրական յայտնի ուժերով... Նրանք մեծ մասամբ հանգուցեալ «Կուռնիկ» ամսագրի խմբագրութեան մտադրողներն էին...

Եւ ահա խմբագրութեան մէջ նրանց մտնելով անմիջապէս սկսեցան խմբագրական ժողովներում տաք վիճաբանութիւններ և անվարական ընդհարումներ... Մեր երգուհայ գրողները շփուելով նոր ուղղութեան հետ, սկսեցին բողբոջել ամեն մի մտքի, ամբի մի գաղափարի դէմ. ամեն մի յայտնած կարծիքը չափից դուրս արմատական էր հայոց ազգի համար վնասակար էր երևում նրանց: Հին տիրացուական դպրոցի ներկայացուցիչներ լինելով նրանք նախ և առաջ սկսեցին բողբոջել «Մշակի» պարզ և անշուք լեզուի դէմ, ապա անկարող եղան հասկանալ որ հայոց լրա-

գրում, բացի հայերի կենքի մասին ուսումնասիրութիւնից, կարելի էր գետնից հայերի հետ մի և նոյն երկրում ապրող, հարեան միւս ազգերի վրացիների, թուրքերի, քիւրդերի կենքի մասին յօդուածներ և ուսումնասիրութիւններ. նրանք չէին կարող մարտել այն միտքը թէ հայոց ազգը բաղկացած է ոչ թէ միայն լուսաւորականներից, այլ և բողոքականներից, կաթոլիկներից, մոսկէականներից, նրանք վրդովվում էին այն կարծիքի դէմ, որ հայերը պէտք է վերջապէս թողնեն իրանց վաճառականութիւնը, կամ աւելի լաւ է ասել չարչիւթիւնը և աւելի դիմեն երկրագործութեան, բնական հարստութիւնների մշակութեան և ձեռագործ արհեստներին... Նրանք ամենախիստ կերպով բողբոջում ապստամբվում էին հասարակական այս կամ այն հաստատութեան վերաբերմամբ յայտնած վերանորոգիչ որ և է մտքի և վերանորոգիչ դիտաւորութեան դէմ...

Երբէք չենք մոռանալ ինչ ազմունքներ յարուցին մեր խմբագրական ժողովներում «Մշակի» առաջին տարվայ շրջանում տաք պայքարած դիւզական և քաղաքային փոխառու խնայողական արկղերի անհրաժեշտութեան մասին յօդուածները և այդ տեսակ արկղերի կանօնադրութիւնը... Այդ արդէն համարվում էր տիրացու-դրողների կողմից հայերի համար մի վերին աստիճանի վնասակար նորաձեւութիւն, ինչպէս վնասակար էր համարվում և այն միտքը, որ մեր երկրի գիւղացին (ինչ ազգութեան և պատկանէր նա) հարստացաւ և դժբախտագույն ունեցող վաշխառուներից... Այդ ժողովը հերձուածով վերջացաւ... «Կուռնիկ» դպրոցին պատկանող տիրացու ազգասէր գրողները ժողովի մէջտեղ սկսեցին դիւարկել վերջին և բողբոջող դուրս գալ ժողովից, յայտնելով որ չեն մասնակցի այն լրագրի գործունէութեան, որը հայոց ազգի աւանդական անդորրութեան դէմ կորստաբեր ընթացք է բռնում, ու հեռուում է կորստաբեր նորաձեւութիւններին և օտարամոլութեան... Վնասակար օտարամոլութիւն էր երևում մեր երգուհայ գրողներին համար և այն, որ մենք ապագրում էինք մեր լրագրում օտար երկիրների հասարակական և քաղաքական կենքն ուսումնասիրող յօդուածներ...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՎՆԱՐԿՆԵՐ

II.

Եթէ ես հուսար լինէի, կը գրէի. «Ժամանակի անիւր մի պտոյտ ևս գործեց, և 1889 թվականը անցաւ անդաւնալի կերպով: Մի երկու օր ևս, և ահա ժամանակի անաւան տարածութեան մէջ անհետացած կը լինի մի ամբողջ տարի ևս, տեղ տալով մի նոր տարեշրջանի: Բայց օրով հետև ևս հուսար չեմ, ուստի ասում եմ. «Հին տարին անցաւ, և դալիս է նորը»:

«Նոր տարի»,—ահա մի խօսք, որ իսկապէս դիւրեւական ազդեցութիւն է գործում նոյն իսկ այնպիսի մարդկանց վրա, որոնք ոչ թէ հուսարներ չեն, այլ մինչև իսկ հուսարներն ունեցնող ատում են, որքան ևս և դու, ընթերցող, ատում ենք ֆրագները, և փրօն խօսքեր լսած միջոցին երեսներս շուռ ենք տալիս արհամարհանքով և քաջակամչում ենք. «դատարկ խօսքեր և փուշ ֆրագներ»:

Պէտք է խոստովանեմ, որ հին տարվայ վերջին և նոր տարվայ սկզբին այնքան զգայուն դառնալը, և այնպիսի հոգեկան դառնութիւններ և քաղցրութիւններ զգալը, ինչպէս պատահում է

մեզանից իւրաքանչիւրին՝ հասարակ մանկանացուներին հետ, ես բացարձակօրէն համարում եմ մի նախապաշարմունք, թէև մի անմեղ նախապաշարմունք, որը ոչ թէ վնասակար չէ, այլ դուք մասամբ էլ օգտակար, ինչպէս օգտակար է առհասարակ այն ոգևորութիւնը, որը մարդուն դուրս է քաշում, հանում է առօրեայ, կենսական, նեղ հայրենիքի և զգացողութիւնների շրջանից, և դարձնում է նրան դէպի գաղափարական աշխարհ, դէպի իր սիրած իդէալների և մտքերի մարզի և անարատ աշխարհը...

«Հին և նոր տարվայ» այդ օգևորութիւնները, երբ մարդիկ միմեանց մօտ այցելութիւններ են անում, երբ ամեն կողմից լսվում է շնորհաւոր նոր տարի՝ երբ մի քանի ժամ շարունակ անհասների մէջ երեսն են դալիս մարդասիրութեան, ընկերութեան աւելի զօրեղ զգացումներ, այդ օգևորութիւնները, ասում եմ, թէ և իսկապէս մի տեսակ նախապաշարմունք են, բայց և այնպէս համարեալ ամբողջ մարդկութեան մէջ այդ անմեղ նախապաշարմունքը շատ լուրջ արմատներ է գցել, և ամենքի վրա մի յայտնի աստիճանի ներգործութիւն ունի:

Հիմարիտ է, դեկտեմբերի 31 թիւը նոյնքան ժամերից է բաղկացած, ինչպէս և միւս օրերը, ճշմարիտ է, նոր տարվայ գիշերը երբեք է նոյն մութը, և նոյն խաւարը, ինչպէս և միւս գիշեր-

ները, ճշմարիտ է յունվարի 1-ին թշուառները նոյն չափով տանջվում են, ինչպէս որ յունվարի 2-ին, բայց և այնպէս դեկտեմբերի 31-ին, և յունվարի 1-ին մարդիկ զգում են այն, ինչ որ ուրիշ օր չեն զգում, և չեն էլ զգայ թէ ցանկանան էլ...

«Հին և նոր տարվայ» այդպիսի խոր ազդեցութեան պատճառը անկասկած այն է, որ ժամանակի հետ շատ սերտ կերպով կապված է ինչպէս անհատական, նոյնպէս և ամբողջ մարդկութեան ումբողջ առաջադիմութիւնը: Ժամանակի և մարդկային ցեղի առաջադիմութիւնը, ճշմարիտ, այնքան անբաժանելի է երևում, որ կարելի է ասել, թէ հենց ինքը ժամանակը—առաջադիմութիւն է: Անցնում են օրեր, ամիսներ և տարիներ՝ և դրանց հետ միասին մարդկութեան մտքի, աշխարհայեցողութեան և կենքի մէջ անդադար տեղի են ունենում փոփոխութիւններ, այնպէս որ ինչպէս ամեն անհատ, այնպէս և ամբողջ մարդկութիւնը զգում է, որ այն օրը ինքը այն չէ, ինչ որ երէկ էր, և երէկ էլ այն չէր, ինչ որ նախորդ օրն էր:

Ժամանակակից հասարակութիւնների կենքն էլ այնպէս սերտ կերպով է հիւսված ժամանակի, կամ աւելի լաւ է ասել, տարիների փոփոխութեան հետ, որ ամեն մի անհատ, ինչ շրջանի էլ պատկանէր, նա, չէ կարողանում առանց արտի արժիւնի նայել, թէ ինչպէս ժա-

մանակի անիւր մի պտոյտ ևս արեց: Հացի կարօտ բազմաթիւ թշուառները երազում են, թէ ահա նոր տարին իրանց համար նոր բազմ կը բերի:

Անօգնական, անպաշտպան մնացած մայրը, որ սպասում է իր որդու մեծանալուն, և նրա օգնութեան, բացակայում է. «մի տարի ևս անցաւ»,—և իրան աւելի մօտ է համարում իր տենչացած ժամին...

Հասարակական նախապաշարմունքի գերի դարձած՝ «պառաւած օրիորդը» մի սարսուռ է ըզգում, երբ տեսնում է, թէ «մի տարի ևս անցաւ»:

Դպրոցում և համալսարանում «կենքի մէջ մտնելու» մտքով ոգևորված պատանիները և երիտասարդները իրանց ձեռքերը տրորում են, տեսնում են թէ մի տարի ևս անցաւ և մօտ է իրանց, ազատ անկախ լինելու ժամը:

Երբ խփում է դեկտեմբերի 31-ին 12 ժամը, ճերմակահեր ծերուկը դողողացող ծայրով մրմռում է. «այս տարին էլ անցաւ», յիշելով իր անցած կեանքը, ակամայ յիշում է և այն, որ ինքը մի քայլ ևս առաջ է դնացել դէպի գերեզմանը:

Մի մի թուր զփուար էլ է այդ բոլորը,—և առանց թւելու էլ շատ պարզ է, որ հասարակական կենքի այժման կազմակերպութեան միջոցին, երբ «պաշտօնեաները տարիներով են չին

մինչև անգամ չը գիտէին էլ, թէ միւր ուսուցիչ
համար կարելի է երիւ, այլ եմբելու փոխարէն
ուսուցիչ միւր փափկացնում էին իրանց ձիաները
թամբի տակ, ձիւ մարմին տաքութեամբ Այդ
նոյն Եւրոպայում չը կար այժմեան քաղաքակր
թութեան հոտն անգամ Մարդիկ երգելը ան
գամ չէին կարող, որ մի քանի վայրկենում կա
րելի է հնուագործ Եւրոպայից Ամերիկա խօսել
մարդիկ կուտէին, կը մորթէին նրան, որ մինչև
անգամ կը համարձակվը ասել, թէ կը դայ մի
ժամանակ, երբ Եւրոպայի մի ծայրից կարելի
հասնապարհործով մի քանի օրու եւ այն էլ ոչ թէ
արաքակտեան ձիով, այլ զորքի զօրով, երկաթուղիներ
րով... Մի մոտացը, որ նոյն Եւրոպայում մի
ժամանակ ի խաչ հանեցին՝ այն մարդուն, Գա
լիէին, որը համարձակութիւն ունեցաւ պնդելու
թէ «երկիրը չարժուում է», իսկ այժմ չէ որ մենք
խեղացնող կը համարենք նրան, ով կը պնդի թէ
երկիրը չէ չարժուում Սրանից մի չորս հազիւ
տարի առաջ Ատլանտեան ուղիներուց անց
չու համար հարկաւոր էր Կոլումբոսի նման հա
ճար, իսկ այժմ Ամերիկա կարող է գնալ ամեն
մի մահկանացուն, որը զրոյանում մի քանի րոպ
ուհի։ Եւ այդ նոյն Ամերիկայում սրանից
մի քանի դար առաջ անմատչելի անտառնե
րում միմիայն վայրենիները էին ապրում այն
տեղ, որտեղ տիրում էր քաջարձակ վայրէ
նութիւն, քաղաքակրթութեան ձեռքը արդէն

Հնորեմի իր վրա դարձրեց համայնքների ժողովի
ուշագրութիւնը: Այս Բորթա Պիլ, որը այն ժամա-
նակ զբաղված էր պահպանողական կուսակցու-
թեան վերակազմութեամբ, բարձր էր գնահա-
տում այդ կուսակցութեանը յարած Ռիլիամ
Գլադստոնին:

Իր հակառակորդ լորդ Բիլիոնֆիլդի հետ հա-
մեմատած՝ Գլադստոն, որպէս պետական գործիչ,
մեծ ժողովրդականութիւն էր վայելում, և այդ
ժողովրդականութեամբ մասամբ պարտական է
իր հետեւորական տաղանդին: Լաւ ուսումնասի-
րած լինելով թէ աստուածաշունչը և թէ կլասիկ-
ները, Գլադստոն թէ պատմութիւնից, թէ աս-
տուածաբանութիւնից և թէ հնագիտութիւնից
գիտէր օգուտ քաղել և այնպիսի օրինակներ բե-
րել, որոնք նոր լոյս էին սփռում վիճելի առար-
կայի վրա: Նրա գործնական, խիստ ճառերը
միշտ մեծ տպաւորութիւն էին գործում անգլիա-
կան համայնքների ժողովի անդամների վրա: Կրթ-
ված չլրջաններով Գլադստոն բազմաթիւ բարե-
կամարներ ձեռք բերեց այն հանձնարարանի
որ շարունակում էր պարագայի հումանիտարական
գիտութիւններով: Գլադստոնի հեղինակութիւն-
ները մէկուտ ժողովրդական են նրա գեղեցիկ էսթե-
տիկ շունչով: Դաւանքով մասին: Այդ էսթետիկ
թիւն ցոյց տուեց, որ կարծես թէ էր ամբողջ
կեանքը նուրբաւ լինելը: Հոմերոսի ուսումնասի-
րութեամբ:

Գլադստոն և Բիլիոնֆիլդ, որպէս ընդհանրա-
գործիչներ և զիջումաւորներ, անկասկած, քիչ
նմանութիւն ունեն միեւնոյն հետ, բայց երկուսն
ևս մինչև այժմ երջանիկ են իրանց ընտանեկան
կեանքում: Անցեալ տարի Գլադստոնների ամուս-
նական զոյգը տունից իր ոսկէ պսակը:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Զմիւռնիա, 8 դեկտեմբերի

Միտոպոլիս վարձարանի վերաշինութեան եր-
բորդ տարեդարձի առթիւ յատուկ հանդէսն տե-
ղի ունեցաւ 2 դեկտեմբերի, կիրակի: Այնպէս
աւարտուեց յետոյ ս. տեղապահը և ամբողջ
քահանայից դասը հանդերձ երգեցիկ աշակերտ-
ներով հանդիսաւոր կերպիւ: Վարձարանի սրահը
առաջնորդուեցան, ուր արդէն երկուսն խուռն
բազմութիւն մը լեցուած էր, հանդէսը սկսաւ
կրկով մը աշակերտաց և աշակերտուհիների
կողմէ, և այս վերջնոց կողմէ հետզհետէ ճա-
ռեր և ոտանաւորներ կարգացվեցան, որոնք
երբեմնակի կընդմիջուէին երգերով: Աշակերտու-
հիք աւելի առաջադէմ հանդիսացան քան աշա-
կերտները, մանաւանդ վեցամեայ աշակերտուհի-
ները: Երբ վրա երևումը և նրա համարձակ ար-
տասանութիւնը ընդհանուրին ծափահարութեան
արժանացաւ. յետոյ, Յ. Տ. Միտոպոլիսի ճառ մը
կարդաց յորով էր բացատրէր զպրօքների աւագ
կարեւորութիւնը, և նաև յոյս յայտնեց ջանք չը
խնայել վարձարանաց առաջադիմութեան համար
և կը վերջացնէր իւր ճառը փափաղ յայտնելով
մի այլ առթիւ ճառել մասնաւորապէս մանկա-
վարական հարցի վրա. բոլորն ծափահարու-
թեամբ ընդունեցաւ այս ճառ. յետոյ ս. տեղա-
պահը ըստով մը խօսեց պարագային յարմար, և
օրհնելով Սրբաթախանայ յիշատակն՝ փակեց հան-
դէսն:

Շատ տարիներ է ի վեր մեր ազգային հանգի-
սները անշուք և հազիւ մի քանի անգիւրի ներկա-
յութեան կը կատարուէին, բայց կիրակեայ
հանդէսը տարբեր հանգամանքով տեղի կունե-
նար. ժողովրդին մեծ մասը ոչ այնչափ հանդիսէն
հետաքրքրվելով կեպո՞ւ էր, որչափ Միտոպոլիսի
ճառը լսելու, որովհետև Միտոպոլիսի հակառա-
կորդները տարածաշնամբ և մինչև իսկ լրագրաց
մէջ հրատարակած էին թէ նա հայերէն իսկ
չը գիտեր, բայց կիրակեայ հանդիսին առ-
թիւ ժողովուրդը հասկցաւ թէ այդ տեսակ
հրատարակութիւններ լոկ թշնամական զիտու-
մով գրուած են, և թէ Միտոպոլիսի քաջ հայերէն
գիտնալէ գաթ, լաւ մանկավարժ մէ միանգա-
մայն:

Մաղիսայի խնդիրը նորէն կը յաղուի. սա
միշտ մի և նոյն քահանայի խնդիրն է. վարդա-
պետանները կը պնդեն թէ քահանան չը պիտի
քահանայադրուէ և քահանայի կողմնակիցները

հակառակը կը պնդեն. այս պատճառաւ մօտերս
նորէն ցոյցներ տեղի կունենան բուն իսկ եկեղե-
ցու մէջ: Չենք գիտեր այս խռովութիւնները երբ
վերջ պիտի գտնեն ի Մաղիսա. ինչու արդեօք
ս. Տեղապահը չազդեր համազօրութիւն տալ
նային Մաղիսայէ հեռացումը անհրաժեշտ է խո-
ղաղութեան պահպանման համար. կարծենք ան-
տեղի է քահանայի մը համար ժողովուրդը երկ-
պառակութեան մէջ ձգել. թէ և կընդունին որ
քահանան յանցաւոր չէ, բայց քանի որ մեծա-
մասնութիւնը կը մերժէ, նրա հեռացումն ան-
հրաժեշտ է. բայց միայն քահանային հեռացմամբ
խռովութիւնը չը պիտի վերջանայ ի Մաղիսա,
աւելի հիմնաւոր պատճառ մը ևս կայ. արդի
թաղական խորհուրդը բոլորովին հակառակա-
նաղղական կերպիւ ընտրուած է և մեծամասնու-
թեան մատնութիւնն չը վայելէր, հետեւաբար
նոր թաղականի մը ընտրութիւնը անհրաժեշտ է
անդորրութիւնը վերջնականապէս վերահաստա-
տելու համար:

Մ. Ղ.

ՄԱՅԱԲԻՆ ԼՈՒՐԵՐ

— Լիւստոնից հեռացումն են, որ Բարդիլիայի
ներքին նահանգներից միւսում ժողովուրդը թա-
ղաւոր է հաշակել Նաւնէս անունով մէկին, որը
մի աւագակային խմբի ղեկավար է: Թէ որքան
ճիշդ է այդ լուրը, — առ այժմ ոչինչ ասել չէ
կարելի, թէ և մեծը տրամադիր ենք միայն համա-
րել այդ լուրը: Սակայն եթէ ճիշդ է լինի այդ
լուրը, այն ժամանակ այդ երկուքը պիտի է հա-
մարել մի դէպք, որը ոչինչ չազդեցական ընա-
րութիւն չունի:

— Պարզի մի քանի լրագրողներ հաղորդում
են թէ Անդլիան իր Պետերբուրգի դեսպանի
միջոցով առաջարկել է Ռուսաստանին միջնորդ
դատարանի դեր կատարել իր և Պորթուգալիայի
մէջ՝ վերջերս ծագած տարածաշնամբի լուրերի վե-
րաբերմամբ:

— Շաքիր-փաշան այս օրերս մի գեկուցում է
ներկայացրել սուլթանին այն մասին, թէ ինչ-
պէս կրեաքցիները գտնու են սուլթանի ֆերմանից:
— Գերմանական կառավարութիւնը կարգադրել
է մեծացնել Էլզաթ-Ղօթարի գործերի թիւը:

— Բելիլիում անցեալ շաբաթվայ ընթացքում
120 մարդիկ մեռան թրջերի բորբոքումից, որ ա-
ռաջ էր եկել իբրի հետեւեալ ինֆլուէնցիայի:

— Ալեքսանդր Լուր է ստացվում, որ իշխան
Բիւմարի պահանջելու է իշխանագից նոր փո-
խաւորութիւն՝ պատերազմական ծախսերի համար:

— Ինֆլուէնցիան արդէն անցել է Ամերիկայի
Միացեալ-Նահանգները:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Արեւմտեան Եւրոպայում ծննդեան տոները շատ
տխուր են անցել, հաշակաւոր ինֆլուէնցիայի
պատճառով: Շատ տեղ զպրօքները, թատրոնները
փակվել են, իսկ ընտանեկան շրջաններումն էլ
նոյն ինֆլուէնցիան պատճառով՝ որ և է սոսա-
խաւորութիւն կատարել անհնարին էր: Այդպիսով
ուրեմն ինֆլուէնցիան շատերի «քէֆը փչացրեց»:

Յիւրոպական հանրապետութեան նախագահի
կինը՝ տիկին Կարնո, ծննդեան տոնին 400 աղ-
քատ մանուկների համար տուածառ սարքեց Է-
լիսեան պալատում: Պարզեցները ինքը տիկին
Կարնո էր բաժանում: Բացի խաղալիքներից
մանուկ-հիւրերից իւրաքանչիւրին ընծայվեց մի
մի տաք հագուստ: Երբ մանկական երեկոյթը
վերջացաւ՝ բոլոր երեխաներին կառքերով ուղար-
կեցին իրանց տները:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՈՒՄԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

10ՆԻՇՆ, 25 դեկտեմբերի (Բեյութերի դարձակա-
ւորութեան հեռագրում են կ. Պոլսից դեկտեմբերի
24-ից (յոնվարի 5), որ թիւրքաց բանակի գնե-
բալ Շաքիր-փաշան ուղարկելով է Սօֆիա սուլթա-
նի յանձնարարութեամբ յայտնելու բոլորական
տէրութեան, որ վերջին ժամանակներու Արեւելեան-
Բալկանիայի ձեռք առած միջոցները արեւելեան
երկրաւորների վերաբերութեամբ, չափում են
սուլթանի ծայրագոյն իրաւունքները: Շաքիր-փա-
շային նոյնպէս յանձնարարված է պնդել, որ այդ
միջոցները վերացվին:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻՂՈՐ ԱՐՄԻՆԻՆ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ամին 25-ին վախճանվեց Թիֆլիսի Տափ-Թաղի սուրբ Գէորգ եկեղեցու
ՂԱԶԱՐՈՍ անաթ քահանայ ՊԱՆԻՊԱՆԱՅԱՆՅ: Հանգուցեալի բնակարանը գրեմ-
վում է Մոզնու հրապարակի վրա, Սահաթսագեանի տանը: Հոգևոր իշխանու-
թեան կարգադրութեամբ այսօր, հինգշաբթի, դեկտեմբերի 28-ին պէտք է կա-
տարվի սուրբ օծման և թաղման հանդէսը:

1—1

Ա. Վ. Օ. Լ. Ֆ. Շ. Մ. Ի. Տ.
ԲԻԳԱ, Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ և ՀԱՄԲՈՒՐԳ.
գոյութիւն ունի 1845 թվից:
ԱՐԱՂ—ԲԱՇԵՆԼՈՒ և ՕՂԻԻ ԳՈՐԾԱՐԱՆ
Պատրաստում է մանաւորապէս. ԱՐԲԻԿՈՏԻՆ, ԲԵՆԵԴԻԿԵՏԻՆ, ՇԱՐՏԵԶ, ԿԻԻ-
ՐԱՍՈ՝ հօլանդական, կակաօ, կակաօ, ՄԱՐԱՍԿԻՆ, միգրի լիպերներ, ԿԻԵՎԻ
նալիվկաներ, միգրի նաւթօղկաներ, ՏՄԻՆԻՆ տափած արագ, նմանապէս
ՕՂԻ, ԲՈՒՄ, ԿՈՆԻԱԿ, ԱՐԱՂ, միակ իսկական ԲԻԳԱՅԻ ԿՈՆԵԶԵՆԱՆ խոտի ԲԱԼ-
ՋԱՄ, ՍՊԻՐՏ, ՄԱԲՐՈՒՄ ՕՂԻ, ԹԻՍՏՈՐ և այլն:
Իմ պատրաստած արտասահմանեան լիկերներ իրանց յատկութեամբ պակաս չեն ներ-
մուծվածները, բայց անհամեմատ էժան են: Նրանք արժանացան թէ համաշխարհային և
թէ այլ ցուցահանդէսներում ամենաբարձր պարգևներին:
Օղիի գործարանի արդիւնաբերութիւնները ծախվում են բոլոր գինեւաճառանոցներում:
Պրէյսկուրանտները ուղարկվում են անվարձ:
6—10 (Տ.) № 1

ՊՐՕԿԵԶՈՐ Ա. ՇՏԵԼԵՐԻ ՄԻՋՈՏԵՐԵԸ
ԱՏԱՄԵՐԻ ՅԱՒ ԵՒ ՓԶԱՆԱԼՈՒ ԴԵՄ
ՊՕԻՈԼԵԱՆ ԱՏԱՄԱԴԵՂ ԿԱԹԻՆԵՐ 50 ԿՈԳ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՅԵՆԱՆ ԱՏԱՄԱՅԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈԳ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈԳ.
ԳԼԻՍԻՈՐ ՊԱՀԵՍ.
ԹԻՖԼԻՍԻՄ՝ Կովկասեան դեղա-
վաճառատան, և պ. պ. Շահ-
պարոնեանցի, Մակկերի, Սէնչի-
կովիկու և Ալմուրովի դեղա-
աներում: ԲԱԳՈՒԻ ՄԵՋ, ԲԵԿԵՐԻ մօտ, ԲՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ Կօկոզեկի մօտ, ՍՏԱՎՐՈՊՈԼԻՍ՝
Բրոննոցկու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕՒՐԻՍ՝
45—52 (Հ.)

ՏՊԱՐԱՆ Մ. ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆԻ ՄՕՍԿՎԱ
Պատիւ ունենք յայտնելու, որ առաջիկայ 1890 թվականից կը բացվի Մոսկովում մեր սեպ-
հական տպարանը, ուր կընդունվեն ամեն տեսակ տպարանական պատուէրներ թէ հայոց, թէ ռու-
սաց և թէ արեւելեան ու արեւմտեան լեզուներով: Պատուէրները կը կատարվեն մաքուր ու ճիշդ
կերպով և դիւրամատչելի պայմաններով:
Հասցեն. Москва, Камергерский пер. д. Лянозова, Типография-Скоропечатня М. Барху-
даряна.
3—3 (Հ.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
Կանտուար և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:
Զորեքշաբթի, յունվարի 3-ին, ՄԻՆԳՐԵԼԻԱ (MINGRELIE) շոգենաւը, նաւա-
պետ ԺԻԲՈԻՆԵ (GIBOIN) դուրս կը դնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսուն,
Կ. Պոլիս և Մարսէյլ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան
գործադիրներին. Բաթումում ԼԷՄՈՂՈՒԼԻ տան, Նաբեքէժույա, և Թիֆլիսում՝ Նախիկ Սը-
ժրուի Ղալիբէկում, № 114.
2—3

Անհրաժեշտ է համարում հրապարակով յայտնել ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ԱՆԴՐԿԱՍՊԱՆ ԵՐԿԻՐ ՊԱՏ-
ԻՆԼԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ, որ մեր կոմիտեական գործն, որ սկսված է 1883 թվից շարունակվում
է: Դարձեալ սովորականի համեմատ ընդունում են յանձնարարական պայմանով, ապրանքներ ստանա-
լու ու ճանիւղու հետեւալ քաղաքներ. ՈՒԶՈՒՆ—ԱՂՍՅ, ՂԱՂԱՎԱԿ, ԱՍԽԱՐԱՒ, ՄԵՐՎ, ՋԱՐԺՈՒ,
ԱՍՈՒՐԴԱՐԻՍ, ԲՈՒԹԱՐԱ և ՍՍՄԱՐԱՆԻ, որտեղ և ունեն կանտոններ, նոյնպէս և ԲԱԳՈՒ:
Նաև կատարում են ապրանքների գնելու, ծախելու և ուղարկելու պատվերներ:
Ցանկացողներն պայմաններին մասին կարող են դիմել ինձ այս հասցեով. ՎՅՄԻՆ-ԱԴԱ—ԱԼԵ-
բերու Назарову.
3—12.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՄՆԱԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդոռնում են ամեն օր
Ա. Ռ. Ա. Ռ. ՕՏԵՐԸ
ԲՈՒԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆԻՔԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ—11/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԻՆՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և օրֆիլիսի (վիրաբույժ. և ատամնաբույժ)
ԱՐՏԵՄԻՆՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:
ԵՐԵՎԱՆԵՐԸ
ԳԱՐՍԻՍԿԻ—5/2—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒԴԻՆԵԱՆ—5/2—6/2 ժ. ներքին, երեխայոց և ջնային ց. (էկկորստիքապիսի):
ԲԵՆԿԻՆՎՍԿԻ—7—8 ժամ.
Հիւանդանոցում են մահկաքաւար ճաշի ց. ԵՐԵՎԱՆԻ և ԱՐՄԱԿԵԱՆԻ
ճար—50 կ. Համախորհրդի (Կոնստիտուցիոն) համար փոխադարձ համաձայնութեամբ:
Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ԲՈՒԿՈՎՍԿԻ







